Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Քեթիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ Սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացումը դասավանդման ընթացքում:

Վերապատրաստող, մենթոր՝ Լաուրա Գրքիկյան

Ուսուցիչ՝ Լուիզա Հովհաննիսյան

Գյումրի 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

ԳԼՈՒԽ 1

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ԱՆՁԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԽԹԱՆ

1.1 Աշակերտների ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը..... 5

1.2 Ինքնուրույն ուսումնական աշխատանքը որպես հետազոտական գործընթաց... 7

ԳԼՈՒԽ 2

ՍՈՎՈՐՈՂԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2.1 Ինքնուրույնության համար անհրաժեշտ նախապայմաններ 11

2.2 Ինքնուրույնության հարցարան..... 14

2.3 Նախաձեռնողության հարցարան 17

Եզրակացություն 19

Օգտագործված գրականություն..... 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթական համակարգում ապագա մասնագետների կայացման համար կարևոր դեր են խաղում մասնագիտության մեջ ինքնորոշումը, մասնագետների և աշխատաշուկայի պահանջարկի համապատասխանությունը, ինչին հնարավոր է հասնել հոգեբանամանկավարժական աջակցմամբ և ուղղորդմամբ: Եթե մինչ այժմ ուսումնառության մեջ մեզ հասած ժառանգությունը իմաստավորվել է մասնագիտական կողմնորոշման ճանապարհով, այն եղել է արդարացված, քանզի ապագա մասնագետները աշխատանքի են ուղղորդվել ըստ ստացված որակավորման: Փոփոխվող հասարակության պայմաններում այն չունի արդյունավետություն, քանի որ ապագա մասնագետները (դեռահասներ, պատանիներ, երիտասարդներ) կրթությունը ստանալուց հետո աշխատանքի ընտրությունը կատարում են ինքնուրույն կողմնորոշվելով, ելնելով պահանջարկից: Այսինքն, այսօր առավել կարևոր է ապագա մասնագիտության համար ինքնորոշումը սեփական անձի հնարավորությունների և կարողությունների գիտակցման ճանապարհով, ոչ թե մասնագիտական կողմնորոշում՝ դրանց գնահատման միջոցով: Այս առումով կարևորում ենք հոգեբանական աջակցումն ու խթանումը ավելի վաղ՝ դեռահասության տարիքում, ինչը հնարավոր է իրականացնել համապատասխան տեղեկատվության լայնածավալ կիրառմամբ և դեռահասների շրջանում հոգեբանական ինքնաճանաչման, ինքնագիտակցման ձևավորման և զարգացման ճանապարհով: Մանկական տարիքի խաղային գործունեության առանձնահատկություններից՝ թե ուր են ուղղված եղել հետաքրքրությունները (ինչպիսի դերեր, հերոսներ, կերպարներ և այլ), մինչև հասուն տարիքում՝ ընդունակություններով պայմանավորված՝ մասնագիտության ընտրություն և իրացում: Յուրաքանչյուր շերտ «պատասխանատու է» տարիքային այս կամ այն փուլի համար:

Այսպես. դեռահասի պատկերացումներն ու երազանքները որոշակի համակրանք, կամ նույնիսկ հրապուրաքն են ձևավորում կոնկրետ մասնագիտության հանդեպ, իսկ արդեն պատանեկան տարիքում դրանք նախահիմք են դառնում արժեհամակարգի համար: Ապագա մասնագետը կայացնում է իր որոշումը, ընտրում է մասնագիտությունն ու ծավալում սկզբում ուսումնական, այնուհետև մասնագիտական գործունեությունը: Հանրակրթական հաստատություններն այսօր նոր պահանջներ են առաջացնում ապագա երիտասարդների համար: Դրանցից ամենակարևորներից է մասնագիտական

կոմպետենտության, որպես իրազեկվածության, ապահովումը: Ավագ դպրոցականների և երիտասարդների մոտ մասնագիտական կոմպետենտությունը կարող է նպաստել ապագա մասնագիտության ընտրության հնարավորությունների ընդլայնմանը, արդյունավետ ինքնորոշմանը: Մասնագիտական ինքնորոշումը ապահովում է որոշակի պատրաստվածություն ապագա մասնագիտության ընտրության համար: Ելնելով այն հանգամանքից, որ կրթական հաստատությունը պետք է ապահովի ոչ միայն գիտելիքներով, այլև այս կամ այն երևույթի մասին գործնականում ինքնուրույն վերլուծություններ և եզրահանգումներ կատարելու փորձառությամբ, անհրաժեշտ է ուսումնառության ընթացքում հաշվի առնել սովորողների՝ որպես ապագա մասնագետների, կոմպետենցիաների ձևավորման գործընթացը ևս: Կոմպետենցիաները, որպես անձի գիտելիքների, կարողությունների, հմտությունների, գործունեության ձևերի փոխկապակցված համախումբ, ձևավորվում են ուսումնական գործընթացներում, տարբեր առարկաների տիրապետման շնորհիվ և ծառայում են ապագա արդյունավետ գործունեության իրականացմանը: Համապատասխան կոմպետենցիաներին տիրապետելը և գործունեության հանդեպ ձևավորված հստակ պատկերացումներն ու վերաբերմունքը ապահովում են մասնագիտական կոմպետենտությունը երիտասարդ տարիքում:

ԳԼՈՒԽ 1

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ԱՆՁԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԽԹԱՆ

1.1 Աշակերտների ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը

Այժմ բոլոր ոլորտներում զարգացման տեմպերն արագանում են, այդ թվում նաև նկատվում է զարգացում կրթական համակարգում: Եվ անհրաժեշտ է աշակերտներին տալ հիմնարար գիտելիքներ և սովորեցնել ինքնուրույնություն: Այս համընդհանուր զարգացման աշխարհում առանձնահատուկ կարողություն է մարդու ինքնուրույնությունը, այն անձնային որակ է: Ինքնուրույնությունը, սեփական կյանքը կազմակերպելու, սեփական հոգևոր ու մտավոր հնարավորությունները գիտակցելու, գնահատելու և ըստ այդմ իր զարգացման ուղին ընտրելու մարդու ընդունակությունն է:[1]

Ինքնուրույնության ձևավորման նախապայմանը ազատությունն է: Որպեսզի աշակերտն ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալի, նրան անհրաժեշտ է այդ հնարավորությունը տալ:Ինքնուրույնության գաղափարի համատեքստում ուսուցչի համար կարևոր խնդիր է դառնում ուսուցման գործընթացն աստիճանաբար ինքնուսուցման գործընթացի վերածելը: Ինքնուսուցման պարագայում սովորողն ինքն է կազմակերպում, կարգավորում և հսկում իր իմացական գործունեությունը: Ինքնուրույն ուսումնական աշխատանքները լավագույնս կարելի է իրականացնել ուսուցման գործընթացը՝ մասնակիորեն հետազոտական գործընթացի վերածելով:

Երեխայի ինքնուրույն գործունեությունը ձևավորվում է դեռևս վաղ մանկության շրջանում: Ուսուցման գործընթացում, կրտսեր դպրոցական տարիքից սկսած, սովորողներին անհրաժեշտ է սովորեցնել աշխատել ինքնուրույն: Երեխայի ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դրսևորվում դասից դաս, դասարանից դասարան: Ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց, այն նպաստում է ինքնուրույության ձևավորմանը: [2]

Աշխատանքային փորձը ցույց է տալիս, որ՝

---

[1] Անձի ինքնիրացման հիմնախնդիրը: Ուսումնական ձեռնարկ / Վ. Ռ. Պապոյան, Է. Ա. Գրին, Ա. Ս. Գալստյան և ուրիշներ, -Եր.: ԵՊՀ հր., 2011, 102 է

[2] Հոգեդիագնոստիկա: ուսումնական ձեռնարկ / ԵՊՀ: Կազմ.՝ Ռ. Ստեփանյան, Ա. Գալստյան.- Եր.: ԵՊՀ հրատ., 2012. 210 էջ:

- Ճիշտ կազմակերպված ինքնուրույն աշխատանքը պարբերաբար անցկացնելով՝ սովորողներն առավել խորը և ճկուն գիտելիքներ են ձեռք բերում, քան ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքների հաղորդման դեպքում:
- Ըստ դիդակտիկական նպատակի և բովանդակության տարատեսակ ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը նպաստում է սովորողների ճանաչողական և ստեղծագործական ունակությունների, մտածողության զարգացմանը:
- Ինքնուրույն աշխատանքի անցկացումն ըստ մանրամասն մշակված մեթոդիկայի՝ արագացնում է սովորողների՝ գործնական կարողությունների և հմտությունների ձևավորումը, իսկ այն իր հերթին դրականորեն է ազդում ճանաչողական կարողությունների և հմտությունների ձևավորման վրա:
- Ժամանակի ընթացքում դասերին ինքնուրույն աշխատանքի պարբերաբար կազմակերպման և տրված առարկայից տրվող տնային աշխատանքների բազմազան տեսակների հետ դրա համապատասխանեցման դեպքում մշակվում է ինքնուրույն աշխատելու հիմնարարկարողությունները:

Այսպիսով, ամեն ինչի հիմքում ազատության գաղափարն է: Վստահել մարդուն և հնարավորություն տալ նրան ընտրելու կրթության սեփական ուղի, օգնել նրան սեփական ճանապարհն անցնելու: Պարտադիր ուսուցումը, ենթատեքստում ունի սովորողի հանդեպ անվստահության մտայնությունը, ինչը մարդուն զրկում է իր ամենացանկալի որակից՝ ինքնուրույնությունից, նաև աշխարհի հանդեպ կենդանի և ակտիվ հետաքրքրությունից:

Գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները զարգանում են ինքնուրույն աշխատանքի ընթացքում:

Ինքնուրույնության բարձր մակարդակը մատնանշում է մարդու սեփական ուժերի հանդեպ վստահությունը, ինքնագիտակցության և հետևաբար, նաև հավակնությունների բավարար մակարդակի առկայությունը: Սակայն, նման որակը դատարկ տեղում չի ձևավորվում. Հանրակրթական համակարգից պահանջվում է մշակել ինքնուրույնության կայացմանը սատարող ռազմավարություն և իրացնել այն ինչպես կրթության բովանդակությամբ ու գնահատման համակարգով, այնպես էլ ուսուցման տեխնոլոգիաներով:

Ինքնուրույնության ձևավորման նախապայմանը ազատությունն է: Որպեսզի սովորողը ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալի, նրան անհրաժեշտ է այդ հնարավորությունը տալ: Կրթության յուրաքանչյուր հաջորդ աստիճանում աշակերտի ազատության սահմանները պիտի ավելի ընդարձակվեն: Ինքնուրույնությունը կարող է ձևավորվել միմիայն համապատասխան գործունեության պրոցեսում: Եթե երեխային սովորեցնում ենք պարտադրաբար, եթե նրան ուսումնական գործունեության ազատություն, սխալվելու և սեփական սխալների հիման վրա ճշմարիտ ճանապարհ դուրս գալու իրավունք չենք տալիս, երբեք նրանից ինքնուրույն մարդ չի ձևավորվի: Եթե երեխան շատ թե քիչ խելացի է՝ կարող է լավ կատարել հանձնարարություններ, իսկ ահա ստեղծագործաբար աշխատել, խնդիր դնել, ծրագիր ու պլան կազմել և ինքնուրույն իրականացնել դրանք՝ ի վիճակի չէ. Նա չունի ինքն իր հանդեպ այդ վստահությունը: Պարտադրանքը սպանում է մարդու մեջ աշխարհի հանդեպ ամեն մի հետքրքրություն: Չկա հետքրքրություն՝ չկա կայուն ուսումնական մոտիվացիա, որը հիմնարար գիտելիքներ ձեռք բերելու գլխավոր երաշխիքն է:

Ինքնուրույնության գաղափարի համատեքստում ուսուցչի համար կարևոր խնդիր է դառնում ուսուցման գործընթացն աստիճանաբար ինքնուսուցման գործընթացի վերածելը:

1.2 Ինքնուրույն ուսումնական աշխատանքը որպես հետազոտական գործընթաց

Ինքնուրույն ուսումնական աշխատանքներ լավագույնս կարելի է իրականացնել ուսուցման գործընթացը մասնակիորեն հետազոտական գործընթացի վերածելով: Ուսումնական աշխատանքները, որ կատարում է սովորողը դպրոցում կամ տանը, պետք է ունենան իրենց մեջ հետազոտական գործունեության տարրեր և այդօրինակ գործունեության չափաբաժինը կրթության յուրաքանչյուր հաջորդ աստիճանում համապատասխան չափով ավելանա:

Ուսումնահետազոտական գործունեությունը ենթադրում է սովորողի ստեղծագործական ընդունակությունների արթնացում ու ակտիվացում: Ուսումնառությունը հետևողականորեն վերածելով ակտիվ ստեղծագործական աշխատանքի հանրակրթական դպրոցը դրանով իսկ պայմաններ կստեղծի այսպես կոչված ստեղծագործ (կրեատիվ) անձի ձևավորման համար, ինչը բոլոր

ժամանակներում (և մեր ժամանակներում՝ առավել ևս) համարվել ու համարվում է անձի ամենակարևոր որակը: Ստեղծագործական ակտիվության չափանիշներ կարող են համարվել ինտելեկտուալ նախաձեռնության դրսևորումը, օպտիմալ մոտիվացիայի առկայությունը, ստեղծագործական ընդունակությունների և կարողությունների զարգացման մակարդակը, ինքնուրույնության դրսևորումը և ուսումնահիմացական գործունեության ինքնակազմակերպման ընդունակությունը:

Մանկավարժները հաճախ առարկում են, թե երեխան հասունացած չէ ինքնուրույնության համար և իրեն նվիրած ազատությունը կարող է չարաշահել՝ մատնվել անգործության: Այստեղ ճշմարտության մի աննշան բաժին կա: Բայց դպրոցի խնդիրն էլ հենց օգնելն է աշակերտին՝ գիտակցել ազատության ու պատասխանատվության դիալեկտիկան: Անառարկելի ճշմարտություն է, որ ազատությունը սովորում են գնահատել ազատ ապրելու պայմաններում, մտածել, պրոբլեմներ հաղթահարել սովորում են դրանք լուծելով, ինքնուրույնության սովորում են նման գործունեություն իրականացնելով, ի վերջո՝ մտածել սովորում են մտածելով, ստեղծագործական գործունեության մեջ ներգրավվելով:

Վերը գրվածից պարզ է դառնում, թե որքան մեծ նշանակություն ունի ինքնուրույն աշխատանքը դպրոցականների ուսուցման գործընթացում: Տարրական դասարաններում գործունեություն ծավալելու կարողության ձևավորումը, իսկ այն հնարավոր է իրականացնել սովորողների ինքնուրույն գործունեության արդյունավետ կազմակերպման միջոցով: Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, սովորողների ինքնուրույն աշխատանքն ունի որոշակի կառուցվածք: Այն իր մեջ ներառում է վեց հիմնական փուլեր.

1. կազմակերպչական. Սա երեխաների աշխատանքային միջավայրի նախապատրաստումն է:
2. բառարանների, հուշաթերթիկների բաշխում, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքի ընթացքում: Աշխատանքային միջավայրի նախապատրաստումը կարևորագույն պայման է արդյունավետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման համար:
3. նախապատրաստական. Այս փուլում ուսուցիչը սովորեցնում է կամ մեկ անգամ ևս հիշեցնում է երեխաներին հանգիստ նստել, չխանգարել իր ընկերներին,

պահպանել լռություն և կարգուկանոն, ուշադիր աշխատել, ինքնաստուգում կատարել և այն, այսինքն՝ այն ամենը, ինչը կապահովի աշխատանքի արդյունավետությունը:

4. կողմնորոշիչ. Այս փուլում ուսուցիչը սովորեցնում է առաջադրանքի բովանդակությունը: Նա ստանալով առաջադրանք՝ ընթերցում կամ վերընթերցում է պայմանը, դիտարկում է առարկան կամ գծագիրը, ընթերցում է տեքստը և այլն: Այս փուլի ընթացքում սովորողն իմաստավորում առաջադրանքը, առանձնացնում է, թե ինչ է տրված, թե ինչ պետք է իմանալ կամ կատարել, ինչպիսի գիտելիքներ և գործողություններ են պահանջվում աշխատանքի կատարման համար: Երեխաները ծանոթանում են հուշաթերթիկի բովանդակությանը: Բացի դրանից, այս փուլում, ուսուցիչը կարող է բաշխել աշխատանքի պլանը: Պլանը կարելի է գրառել նաև գրատախտակին: Գրատախտակին փակցվում է նաև թեմայի շուրջ մշակված պաստառները, սխեմաները և այլն: Այս փուլում ձևավորվում է ուսումնական աշխատանք ծավալելու կարևորագույն կարողություններից մեկը՝ աշխատանքի համար կարևոր նյութեր ընտրելու կարողությունը:

5. հիմնական փուլ. Ալս փուլում կատարվում է ինքնուրույն աշխատանքը:

6. ամփոփիչ փուլ.Այս փուլում կատարվում է անցուդարձ: Ուսուցիչը գնահատում է, քննարկում է, վերլուծում ամբողջ դասարանի աշխատանքի ընթացքը, արդյունքները:

Կազմակերպելով սովորողների ինքնուրույն աշխատանքը՝ ուսուցիչը պետք է կարողանա պատասխանել հետևյալ հարցերին.

- ✓ Տվյալ ուսումնական նյութի ուսումնասիրման գործընթացի որ փուլում է նպատակահարմար կազմակերպել ինքնուրույն աշխատանքը,
- ✓ ինքնուրույն աշխատանքի ինչ տիպ է անհրաժեշտ ընտրել և կիրառել գիտելիքների յուրացման տվյալ փուլում:

Ինքնուրույն գործունեության կազմակերպումն ու անցկացումը պահանջում է հատուկ մոտեցում: Այդ պատճառով անհրաժեշտ է մանրամասն մշակել դասի պլանը, որոշել ինքնուրույն աշխատանքի տեղը դասի ընթացքում, բովանդակությունը, դրա կազմակերպման ձևերն ու մեթոդները: Միայն այս դեպքում ինքնուրույն աշխատանքը արդյունավետ կընթանա: Ընդ որում, մանկավարժը պետք է նախատեսի աշխատանքի բարդության մակարդակը, ծավալը, հնարավոր

սխալները, դժվարությունները, որոնք կարող են ծագել երեխաների մոտ՝ այդ աշխատանքի կատարման ընթացքում: Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է մտորել նաև սովորողներին ցուցաբերվող օգնության և ստուգման ձևերի մասին: Հատկապես տարրական դասարաններում ինքնուրույն աշխատանքի կազմակերպման նպատակով անհրաժեշտ է կիրառել բազմազան մեթոդական երաշխավորություններ, հուշաթերթիկներ: Դրանք նպաստում են արագ յուրացնել գործողությունների որոշակի հաջորդականություն կատարելու և սեփական գործունեությունը կազմակերպելու համար անհրաժեշտ կարողությունները:

Ինքնուրույն աշխատելու կարողությունները մշակվում են նպատակաուղղված վարժությունների և աստիճանաբար բարդացող առաջադրանքների միջոցով: Մինչ ինքնուրույն աշխատանքի համար առաջադրանքներ տալը, այդ առաջադրանքների տեսակները յուրացվում են նախապես ուսուցչի հետ միասին կատարվող աշխատանքների միջոցով: Այնուհետև առաջադրանքների այս կամ այն մասը կատարում են աշակերտները և, վերջապես, նրանք հնարավորություն են ստանում ամբողջ առաջադրանքը կատարել ինքնուրույն: Ուսուցիչը պետք է որոշի առաջադրանքների տեսակը, դրա տեղը դասի ընթացքում, բացատրի նպատակը և կատարման քայլերի հաջորդականությունը, հետևի սովորողների աշխատանքին՝ անհրաժեշտության դեպքում ցուցաբերելով օգնություն առանձին աշակերտներին: Աշխատանքի ստուգումը ևս կատարվում է ուսուցչի ղեկավարությամբ: Վերջինս արդյունքների քննարկմանը մասնակից է դարձնում ամբողջ դասարանին:

ԳԼՈՒԽ 2

ՍՈՎՈՐՈՂԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2.1 Ինքնուրույնության համար անհրաժեշտ նախապայմաններ

Ինքնուրույնության համար անհրաժեշտ նախապայմաններ են հանդիսանում որոշման կայացումը, ներքին ազատությունը, պատասխանատվության գիտակցումը, կայացման ձգտումը, ինչին հնարավոր է հասնել գիտելիքի, մասնագիտության նախընտրության և պահանջարկի համապատասխանությամբ, արժեհամակարգի

ձևավորմամբ, մատչելի տեղեկատվության ապահովմամբ և այլն... Ինքնուրույնության խթանման համար անհրաժեշտ է կարևորել համապատասխան մոտեցումներն ու սպասումները ինչպես տարիքային տարբեր փուլերում, այնպես էլ կրթական տարբեր աստիճաններում: Մանկության տարիներին ազատ և դերային խաղերի առաջադրմամբ երեխային կարելի է ուղղորդել, հետևել նրա ընտրության սկզբնական քայլերին, սովորեցնել պատասխանատվություն կրել սեփական ընտրության համար: Ավելի ուշ, դպրոցական տարիքում առավել կարևորվում է գիտելիքը, իմացությունը, ինչը թելադրվում է մեծի կողմից, և այս առումով ինքնուրույնության խթանումը զուգահեռ դժվար է իրականացնել: Սեփական անձի հետաքրքրությունների և ապագա մասնագիտության սկզբնական ինքնորոշման քայլերը կարող են իրականանալ վաղ դեռահասության տարիքում: Եթե տեղեկացվածությունը, մասնագիտությունների մասին պատկերացումները բավարար լինեն ինքնորոշման համար, ապա ուսումնական հաստատություններում սովորողները կա- 8 րող են ինքնուրույն կողմնորոշվել սպասվող հոսքային ընտրության համար, այսինքն կայացնել որոշում՝ որպես ապագա մասնագետ: Մեր կողմից տարիների ընթացքում մշակվել են մասնագիտական ինքնորոշումը խթանող մի քանի գնահատման գործիքներ, որոնք փորձարկվել և տեղայնացվել են հանրակրթական և բուհական հաստատությունների սովորողների շրջանում: Ներկայացվող մեթոդական ուղեցույցն ընդգրկում է նաև տեղայնացված հայտնի հոգեբանական թեստեր, գործնական վարժություններ և տեխնիկաներ, որոնք ևս անցել են փոձարկման ճանապարհ:[3]

Առանձնակի կարևորվել են մասնագիտական կոմպետենտության և ինքնիրացման էական նշանակությունները, համադրություններն ու տարբերությունները: Կոմպետենտության տեսանկյունից կարևորվել է՝

- համապատասխան գիտելիքի տիրապետումը,
- մասնագիտական նույնականացումը,
- նպատակի և դրան հասնելու միջոցների հստակությունը,
- պարտականության գիտակցումը,
- գործին ուղղված պատասխանատվության զգացումը,

[3] Մասնագիտական կողմնորոշման հիմունքներ (գործնական հոգեբանություն): ուսումնամեթոդական ձեռնարկ / Ս. Վ. Հովհաննիսյան. – Եր.: ԵՊՀ հրատ., 2014. – 332 էջ

- մասնագիտական գործունեության մեջ հնարավոր խնդրի կանխատեսումը,
- անձնային և մասնագիտական որակների փոխլրացումն ու համադրումը,
- աշխատանքի արդյունքի կարևորումն ու պահանջարկը:

Ուսուցման արդյունավետությունը մեծապես կախված է դասավանդման մեթոդներից և դասապրոցեսում կիրառվող հնարներից: Ուսուցիչը հաճախ կիրառում է աշակերտների ակտիվությունը խթանող հնարներ: Անկասկած, այդ հնարների կիրառմամբ նրանք սովորեցնում են աշակերտներին ինքնուրույն աշխատել, բայց այն դեռ ինքնուրույն աշխատանք չէ: Ինքնուրույն աշխատանքը մի կողմից արդեն ձեռք բերված ինքնուրույնության արտահայտումն է, մյուս կողմից ինքնուրույնության զարգացմանը նպաստող որակ:

Տարբերվում են աշակերտների ինքնուրույնության 4 մակարդակ

1.Վերարտադրողական ինքնուրույնություն

Դրսևորվում է հիմնականում վարժությունների կատարման ընթացքում: Այս մակարդակն ունեցող աշակերտն առաձադրանքների կատարման ընթացքում կիրառում է ձեռքի տակ եղած օրինակի մեթոդը:

2. Ընտրովի ինքնուրույնություն

Աշակերտը մի շարք օրինակներից ընտրում է մեկը, կիրառում այն նոր առաջադրանքների ինքնուրույն կատարման ընթացքում:

3.Մասնակի որոնողական ինքնուրույնություն

Սովորողը առաջադրանքի կատարման ընթացքում կիրառում է ընդհանրական կարողություններ, որոնք ձեռք է բերել այլ թեմաների ուսուցման ընթացքում: Նա կարողանում է պլանավորել և կազմակերպել իր ինքնուրույն գործունեությունը:[4]

4.Ստեղծագործական հետազոտական ինքնուրույնություն

Այս մակարդակում սովորողը դրսևորում է ստեղծագործական մակարդակ: Ինքնուրույն աշխատանքները զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունը ու ակտիվությունը: Այդ աշխատանքի հմտությունները չեն ծագում ինքն իրենց, դրանք անհրաժեշտ է ձևավորել և դրանում հսկայական դեր ունի ուսուցիչը: Սովորողների

[4] Մասնագիտական ինքնորոշման և կայացման հոգեբանական ուղղորդումը կրթական համակարգում // նյութերի ժողովածու, հեղ. Վ. Պապոյան, Ա. Գալստյան, Ե. Մուրադյան, Դ. Սարգսյան // Եր., ԵՊՀ հրատ., 2015, 76 էջ

ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դաստիարակվում է դասից դաս, դասարանից դասարան: Ինքնուրույն աշխատանքի համակարգված կազմակերպմամբ հնարավոր է հասնել այն բանին, որ երեխաները ճկուն և խորը յուրացնեն հասկացությունները, օրինաչափությունները, դաստիարակել նորը ճանաչելու ցանկությունը և զարգացնել այն կարողությունները, որոնք պարտադիր են ինքնակրթության և ինքնակատարելագործման համար: Յորաքանչյուր սովորողից պահանջվում է կարողությունների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ձևավորել կարողունակություններ: Դրան հասնելու համար պետք է ունենալ բարձր մակարդակ և այնպիսի գործնական որակներ, ինրպիսին են

1. Ունենա ինքնուրույն մտածելակերպ, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու կարողություն

2. Ունենա պետական չափորոշչով սահմանված գիտելիքների համակարգ և ձեռք բերած գիտելիքները կյանքում կիրառելու ունակություն:

2.2 Ինքնուրույնության հարցարան

Յուրաքանչյուր հարցի համար ընտրեք ա), բ), գ) տարբերակներից որևէ մեկը:

1. Սովորաբար ինչպես եք պատրաստվում դասերին և դպրոցական պարապմունքներին.

ա) վստահելով սեփական ուժերին, աշխատասիրության միջոցով

բ) դիմելով համադասարանցիների և ուսուցիչների օգնությանը

գ) հույսը դնելով ուրիշների վրա:

2. Երբ ունենում եք որոշման կայացման խնդիր, ինչպես եք այն իրականացնում.

ա) մշտապես այլ մարդկանց խորհուրդով

բ) երբեմն խորհրդակցելով մտերիմ մարդկանց հետ

գ) հույսը դնելով սեփական փորձի և գիտելիքների վրա:

3. Ինչպես եք ընտրում մտերիմ ընկեր.

ա) առաջնորդվելով այլ մարդկանց կարծիքներով

բ) մտերիմների հետ խորհրդակցելով

գ) առաջնորդվելով միայն սեփական կարծիքով:

4. Ինչպես եք պնդում Ձեր սեփական կարծիքը ընկերական միջավայրում.

ա) մշտապես, բոլոր հանգամանքներում

բ) վիճաբանելով, փորձելով չոտնահարել դիմացինի կարծիքը

գ) դժվարանում եմ պահպանել:

5. Ինչպես եք պնդում Ձեր սեփական կարծիքը ընտանիքում.

ա) մշտապես, անկախ հանգամանքից

բ) մեծմասամբ դեմ գնալով, պահպանելով իմը

գ) հազվադեպ եմ կարողանում պահպանել:

6. Ինչպես եք Ձեզ դրսևորում ուսումնական, հասարակական և մտավոր ոլորտներում.

ա) մշտապես ընդունելով մյուսների առաջարկները

բ) հասարակական աշխատանքներում ակտիվություն ցուցաբերելով

գ) առաջնահերթ ուսմամբ տարվելով:

10 7. Ինչպես եք հետևում սեփական առողջությանը.

ա) հազվադեպ ուշադրություն դարձնելով

բ) մեծերի խորհրդով

գ) մշտապես հետևողական եմ:

8. Իմ հետաքրքրություններում կողմնորոշված եմ՝

ա) դեպի ապագա մասնագիտությանը

բ) տատանվելով մի քանի բնագավառների միջև

գ) դեռևս կողմնորոշված չեմ:

9. Սիրում եք հաջողության հասնել.

ա) դիմելով փորձառուների աջակցությանը

բ) կենտրոնանալով գործին

գ) վստահելով սեփական ուժերին:

10.Ինչպես կկազմակերպեք Ձեր կենցաղը, եթե մենակ լինեք.

ա) առանց որևէ դժվարության

բ) կհետաձգեմ գործերը, մինչև օգնողներ լինեն

գ) կդժվարանամ:

11.Ինչ որոշում կկայացնեք դպրոցն ավարտելուց հետո.

ա) կշարունակեմ ուսումս հաշվի առնելով սեփական նախասիրություններս ու գիտելիքներս

բ) կառաջնորդվեմ ծնողներիս և մտերիմներիս խորհուրդներով

գ) կդժվարանամ որոշում կայացնել:

12.Ինչը դեր կխաղա Ձեր ապագա աշխատանքի ընտրության մեջ.

ա) պահանջարկը և աշխատատեղի հնարավորությունը

բ) կապերը, ծանոթներից ստացված տեղեկությունները

գ) կսպասեմ առաջարկի:

13.Եթե տանը ինչ-որ իր փչանում է, ապա Դուք՝

ա) կփորձեմ վերականգնել այն

բ) կդիմեմ մեծի օգնությանը

գ) դեն կնետեմ:

14.Եթե պետք է կատարեք կարևոր առաջադրանք, ապա

ա) կառաջնորդվեմ մասնագետի կարծիքով

բ) կփորձեմ խորհրդակցել մեծի հետ

գ) կկենտրոնանամ գործին լիովին:

15.Ձեզ համար կարևոր է.

ա) ուսումնական գործընթացին հարմարվելը

բ) գիտելիքներն ու իմացությունը

գ) բարձր առաջադիմությունը:

16.Երբ հանդիպում եք դժվարությունների՝

ա) հիասթափվում եք

բ) փորձում եք կանգ առնել, կշռադատել

գ) ավելի եք կենտրոնանում անելիքների վրա:

17. Կարողանում եք հետևել Ձեր հագուստին

ա) այո

բ) մեծի օգնությամբ

գ) ոչ:

18. Երբ հստակ որոշում եք կայացնում, ապա կարևորում եք՝

ա) այլ մարդկանց հավանությունը

բ) մեծերի խորհուրդը

գ) սեփական կարծիքում համոզվածությունը:

19. Երբ հայտնվում եք անծանոթների միջավայրում, ապա՝

ա) ակտիվություն եք ցուցաբերում ծանոթության նպատակով

բ) ընդառաջում եք դիմացինի ակտիվությանը

գ) ոչինչ չեք ձեռնարկում:

20. Հասարակական կարծիքի հանդեպ ունեք հետևյալ մոտեցումը՝

ա) անտեսում եք

բ) ընդունում եք մասամբ

գ) ընդունում եք լիովին:

Թեստի բանալի. Եթե հարցվողը ընտրել է ա) տարբերակը 1, 4, 5, 8, 10, 11, 12, 13, 17, 19 և 20 հաստատումների համար, ապա յուրաքանչյուր համընկնման դեպքում ստանում է 2 միավոր: Եթե ընտրել է գ) տարբերակը 2, 3, 6, 7, 9, 14, 15, 16 և 18 հաստատումների համար, ապա յուրաքանչյուր համընկնման դեպքում ստանում է 2 միավոր: Եթե հարցվողն ընտրել է միջին՝ բ) տարբերակը, ապա ստանում է 1 միավոր: Ստացված արդյունքները գումարվում են:

Արդյունքների մեկնաբանություն. 27-40 միավոր – անտարբեր, չեզոք վերաբերմունք այլ մարդկանց կարծիքին, լիովին ինքնուրույնություն, որը կարող է նույնիսկ հասնել համառության, ինքնավստահության: Այս ցուցանիշը կարող է հանգեցնել լրացուցիչ սահմանափակումների, տարբեր պարագաներում գերվստահության և նպատակին ամեն գնով հասնելու անսահման ձգտման:

13-26 միավոր – բնութագրվում է անձի հուսալիությամբ և կայունությամբ, դժվարությունների հանդեպ դիմացկունությամբ և հարմարվողականությամբ: Այս ցուցանիշների դեպքում առկա է իրատեսական վստահություն սեփական ուժերի հանդեպ, նաև գնահատվում է շրջապատողների կարծիքը, որոնց կողմից անձը ճանաչվում և գնահատվում է:

0-12 միավոր – բնութագրվում է սեփական անձի հանդեպ անվստահությամբ, շրջապատից կախվածությամբ, անորոշությամբ:

2.3 Նախաձեռնողության հարցարան

1. Ի՞նչ կանես, եթե խանութում գտնես ինչ-որ մեկի դրամապանակը:
2. Ի՞նչ կանես, եթե կորցրել ես ուրիշի իրը:
3. Ո՞ր դեպքերում են դիմում ոստիկանի:
4. Ինչպե՞ս դու կվարվես, եթե քեզնից փոքրը սկսի կռվել քեզ հետ:
5. Ի՞նչ կանես, եթե տեսնես փողոցում կանգնած երեխայի ուղղությամբ սլացող մեքենան:
6. Ինչու՞ է ավելի հարմար շենքը կառուցել քարից, այլ ոչ թե պանելից:
7. Ինչու՞ են կանանց և երեխաներին պատերազմական իրավիճակներում տեղահանում:
8. Ինչու՞ են հանցագործներին մեկուսացնում:
9. Ինչու՞ է թանկ ապրանքը ավելի հարմար գնել խոշոր թղթադրամով, քան մանրադրամներով:
10. Ինչու՞ է սննդամթերքի վրա ժամկետ նշվում:
11. Ինչու՞ է ավելի հարմար դրամը փոխանցել բարեգործական հիմնադրամ, քան տալ մուրացկանի:
12. Ինչու՞ են ընտրությունները կատարում փակ, գաղտնի քվեարկությամբ:
13. Ինչու՞ է ավելի հարմար քաղաքից դուրս զբոսանքի գնալուց օգտվել միանգամվա սպասքից:

14.Ինչու՞ է անհրաժեշտ կատարել խոստումը:

15.Ինպե՞ս կմեկնաբանեք հետևյալ ասացվածքը. «Ամեն փայլող բան ոսկի չէ»: 16.Ինչու՞ ենք ընտրում պատգամավորներ:

17.Ինչու՞ համար են ներմուծվում նոր գաղափարները:

18.Ի՞նչ կանես, եթե քո փոխարեն մեկ ուրիշն է որոշում կայացրել քեզ վերաբերող կարևոր հարցում:

19.Ինչպե՞ս կմեկնաբանես այս արտահայտությունը. «Այսօրվա գործը վաղվան մի թողնիր»:

20. Ե՞րբ է արդարացվում համառություն ցուցաբերելը:

Թեստի բանալի. Յուրաքանչյուր պատասխան գնահատվում է 2 միավոր, եթե հարցվողը տվել է հստակ պատասխան (նույնիսկ մեկից ավելի), որում երևում է սեփական կարծիքը կամ գործողությունը: Յուրաքանչյուր պատասխան գնահատվում է 1 միավոր, եթե հարցվողը պատասխանի մեջ դիմում է մեծահասակի կամ այլ մարդու աջակցությանն ու միջամտությանը: Յուրաքանչյուր պատասխան գնահատվում է 0 միավոր, եթե հարցվողը դժվարանում է հիմնավորում գտնել: Արդյունքների մեկնաբանություն. 27-40 միավոր – այս ցուցանիշը բնութագրվում է նախաձեռնողության բարձր մակարդակով, որը բնորոշ է անկախություն սիրող ինքնուրույն անձանց: 13-26 միավոր – այս ցուցանիշների դեպքում առկա է նախաձեռնողության միջին մակարդակ, որում արժևորվում է այլ մարդկանց, մեծահասակների խորհուրդը, օգնությունը և միջամտությունը: 0-12 միավոր – բնութագրվում է սեփական անձի հանդեպ անվստահությամբ, շրջապատից կախվածությամբ, ինքնուրույնության և նախաձեռնողության թույլ արտահայտվածությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ուսուցման գործընթացի կազմակերպման նոր ձևերը, մեթոդները և տեխնոլոգիաները պետք է նպաստեն մարդու ինքնուրույնության ձևավորմանը, հիմնարար գիտելիքների ձեռքբերմանն ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Ինքնուրույն աշխատանքը բավականին մեծ դեր ու նշանակություն ունի: Ինքնուրույն է համարվում այն աշխատանքը, որի ընթացքում սովորողները պարզորոշ պատկերացնում են աշխատանքի նպատակը, դրա կատարման կարգը և կատարում են այն՝ առանց ուսուցչի անմիջական մասնակցության: Ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց: Ուսուցման գործընթացում, կրտսեր դպրոցական տարիքից սկսած, սովորողներին անհրաժեշտ է սովորեցնել ինքնուրույն աշխատել: Եթե երեխաները դեռևս փոքր տարիքից սկսած սովորում են ինքնուրույն աշխատել, ապա այդ կարողությունը դառնում է նրանց սեփականությունն ամբողջ կյանքի ընթացքում:

Ինքնուրույն մտածողությունը գիտնականները դիտարկում են որպես կարևորագույն բնութագրիչ անձի զարգացման հարցում: Որքան ինքնուրույն է մարդն իր արարքների, որոշումների և գործունեության մեջ, այնքան նա հասուն անհատ է:

Ինքնուրույն աշխատանքը պետք է կազմակերպել այնպես, որպեսզի այն համապատասխանի յուրաքանչյուր աշակերտի կարողություններին, այսինքն ինքնուրույն աշխատանքի համար նախատեսվող առաջադրանքները պետք է լինեն տարբերակված: Ուսուցիչը պետք է իր համար հստակեցնի տարբերակված ինքնուրույն աշխատանքի նպատակը՝ ապահովել յուրաքանչյուր աշակերտի կատարած աշխատանքի առավել բարձր արդյունավետությունը ինչպես դասի ժամանակ, այնպես էլ տանը: Դրա համար անհրաժեշտ կլինի հաշվի առնել յուրաքանչյուր աշակերտի անհատական առանձնահատկությունները՝ հիշողության, մտածողության, նախապատրաստվածության մակարդակը և այլն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Անձի ինքնիրացման հիմնախնդիրը: Ուսումնական ձեռնարկ / Պապոյան Վ. Ռ., Գրին Է. Ա., Գալստյան Ա. Ս. և ուրիշներ, -Եր.: ԵՊՀ հր., 2011, 102 էջ
2. Հեքիաթաթերապիայի տեսություն և պրակտիկա: ուսումնական ձեռնարկ / Ղազարյան Գ. Հ., Գալստյան Ա. Ս., Մուրադյան Ե. Բ. -Եր.: Հեղ. հրատ., 2015թ. 84 էջ:
3. Հոգեբանական և սոցիալական աշխատանքները ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունում (հեղ. Ավանեսյան Հ., Պապոյան Վ., Գալստյան Ա. և ուրիշներ), Երևան, 2009, էջ 19-35
4. Հոգեդիագնոստիկա: ուսումնական ձեռնարկ / ԵՊՀ: Կազմ.՝ Ստեփանյան Ռ.,. Գալստյան Ա.- Եր.: ԵՊՀ հրատ., 2012. 210 էջ:
5. Մասնագիտական կողմնորոշման հիմունքներ (գործնական հոգեբանություն): ուսումնամեթոդական ձեռնարկ / Հովհաննիսյան. Ս. Վ. – Եր.: ԵՊՀ հրատ., 2014. – 332 էջ
6. Մասնագիտական ինքնորոշման և կայացման հոգեբանական ուղղորդումը կրթական համակարգում // նյութերի ժողովածու, հեղ. Պապոյան Վ., Գալստյան Ա., Մուրադյան Ե., Սարգսյան Դ. // Եր., ԵՊՀ հրատ., 2015, 76 էջ
7. Պապոյան Վ. Ռ., Գալստյան Ա. Ս., Երիտասարդ մասնագետների ինքնիրացման հոգեբանական առանձնահատկությունները, Բանբեր Երևանի պետական համալսարանի, 131,4, Երևան, 2010 էջ 50-56